Հարգելի՛ գործընկեր, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից gnumner.minfin.am կայքում տեղադրած ՀԱՃԱխ ՍՏԱՑՎՈՂ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ բաժնի "Պատվիրատուների կողմից տրված հարցեր" ֆայլում, 11-րդ կետում, որպես ֆինանսների նախարարության կողմից պատասխան, նշված է հետևյալը.

«**Եթե ապրանքների գնման հրավերների տեխնիկական բնութագրերում օգտագործվում են հղումներ, ապա հրավերով սահմանվում են նաև պատվիրատուի կարիքի բավարարման տեսակետից որպես համարժեք համարվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը: Քննարկվող կարգավորման կիրառման դեպքում հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերի տեխնիկական բնութագրերում նշված ապրանքները, իսկ հայտերի գնահատման փուլում բավարար է գնահատվում միայն հրավերում նշված բնութագիր (ֆիրմային անվանում, մոդել և արտադրող) ունեցող ապրանքը**:»

Ձեր կողմից կազմված հրավերում ներկայացված են հետևյալ պահանջները

3-րդ չափաբաժնի համար նշված է. **«Universal Robots Collaborative Robots CR5e կամ համարժեք՝ DEVONICS Collaborative Robots Dobot CR5»**,

4-րդ չափափաբաժնի համար. **«Universal Robots Collaborative Robots CR7e կամ համարժեք՝ DEVONICS Collaborative Robots Dobot CR7»**

7-րդ չափաբաժնի համար. **«Keithley's Series 26XX կամ համարժեք Keysight B29XX Series»**

9-րդ չափաբաժնի համար. **«Keysight EXR40XX series կամ համարժեք Rohde & Schwarz RTO series»**

Ինչպես նաև որպես մատակարարման պահանջ նշված է . **«2025 թվականին Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 60 օրացուցային օրվա ընթացքում: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:»**

Ճիշտ է, համաձայն ֆինանսների նախարարության կողմից տրամադրված պարզաբանման պատվիրատուն իրավունք ունի նշելու համարժեք ապրանքներ և պահանջելու մատակարարել բացառապես դրանք, միևնույն ժամանակ այդ ապրանքների համար հստակ պետք է նշված լինեն **որպես համարժեք համարվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը:**

Տեղեկացնում ենք Ձեզ, որ 3-րդ և 4-րդ չափաբաժիններում նշված **DEVONICS կազմակերպությունը չի հանդիսանում Dobot CR5 (CR7) ռոբոտների արտադրողը: Նա միայն Ինտեգրատոր է և DEVONICS Collaborative Robots Dobot CR5 (CR7) տեսակի ռոբոտներ չեն կարող լինել:**

Ուստի խնդրում ենք նշել երկրորդ այլ համարժեքներ այդ չափաբաժինների համար:

7-րդ և 9-րդ չափաբաժիններում ներկայացված **Keithley's Series 26XX; Keysight B29XX Series; Keysight EXR40XX series; Rohde & Schwarz RTO series»** մակնշումները բնութագրում են մոդելային շարքը այլ ոչ մոդելները:

Խնդրում ենք նշել ձեր կողմից ընդունելի համարժեք մոդելների անվանումները:

Ինչպես նաև խնդրում ենք վերանայել պահանջվող մատակարարման ժամկետը, քանի որ պահանջվող ապրանքներից շատերի համար անհրաժեշտ է միյան 60 և ավելի օր բեռնափոխադրման համար, չհաշված արտադրության համար նախատեսված ժամկետը: